

ուանից եւ կամ մարաց (Ատրպատականոց) կողմից Կուրի հովտով դէպի վեր քշուած լինին, մինչեւ թարթառի (Արտու) գետաբերանը, ուր եւ մենք Բ. դարուց սկսած Գ. Յ. Ուտի նահանգն ենք դտնում, Խալխալ (յետոյ՝ Պաստաւ) մայրաքաղաքով:

Աղուանից ցեղերի առաջխաղացումը դէպի Կուրից հարաւ տարածուող երկրամասերը՝ բաղդատարար ուշ ժամանակներում է տեղի ունեցել, այն եւս հարաւ-արեւելքից դէպի հիւսիս-արեւմուտք ուղղութեամբ:

Առաջին երկրամասը, որ աղուանք գրաւեցին, Կասպիական շրջանն էր, յետագայի Փայտակարանը:

Աղուանից աղբային-ինքնուրոյն թաղաւորութեան հիմնադրութիւնը Պոմպէլոսի արշաւանքի օրերին (66-5 թ. Ք. Ա.) տակաւին շատ էլ հին դէպք էր: Գրա հետեւանքով ժամանակաւորապէս կանգ առաւ հայերի ծաւալումը այդ ուղղութեամբ:

Մերայ Մաշքոց Ե. դարում ոչ միայն հայերի եւ վրացիների, այլ եւ աղուանից համար այրուբեն գտաւ, որով եւ նրանց առիթ ընծայեց՝ Ս. Գիրքը աղուաներէնի թարգմանելու:

Մենք տեղեկութիւն ունինք, որ դեռ 10-րդ դարում Պարտաւում⁴ շարունակում էին մի յատուկ լեզու խօսել, եւ որ արրաներէնն (աղուաներէն) էր: Եւ սակայն աղուանից եկեղեցական ժողովների թղթերը, որոնք մեր ձեռքն են հասած, բոլորն էլ հայերէն լեզուով են գրուած, այնպէս որ աղուաներէն գրուած եւ ոչ մէկ տող գրութիւն հասած է մեզ, եթէ հաշուելու չլինենք աղուաներէն ամսոյ անունները, որ պահուել են Փարիզի աղբային մատենադարանի ձեռագիրներից մէկում⁵):

4) Այժմեան Աղղամի մօտերը, Եւլախ-Շուչի ճանապարհին (Բարուա):

5) Աւելացնել պէտք է, որ դեռ քառասուն տարի առաջ (1886-ին) պ. Նիկ. Բարաւեանցը Միւնխէնում մի հայերէն ձեռագրի մէջ գտել է աղուանից այրուբենի 2 գրերը, որոնցից շատեր նման են հայերէն համապատասխան տառերին: Այդ խնդրին վերջերս անդրադարձաւ գերման գիտնական Իւնկերը ("Caucasica" հանդէս, III գիրք, 1926):

Երբ վրացական եկեղեցին հայկականից բաժանուեց եւ յունականին միացաւ, երբ այդ ժամանակից սկսած Աղուանից արեւելեան իշխանութիւնները՝ Շաքէ, Կասպաղաք, Մուզան, որոնք հնուց ի վեր իրանական ազդեցութեան ենթակայ էին, մահմեդականացած Շիրվանի թագաւորութեան կողմից վտանգուեցին եւ կամ նրա տիրապետութեան տակ ընկան, երբ մինչեւ իսկ Շակաչն գաւառի Գանձակ քաղաքում մի քրդական կամ, աւելի շուտ, գելու-միտական իշխանական տուն էր (Բանու Շաղղաղ անունով) հաստատուել, — ահա այդ ժամանակից էլ երկու քոյր եկեղեցիները հարկազրուած զգացին սերտօրէն մօտենալու իրար:

Աղուանից պատմութեան վրայ քաջուած քօղը Մարքիարոս գլխաւորապէս նրանով է բացատրում, որ հայ պատմադիրները, նրանց թուում նաեւ աղուանից պատմիչ Մովսէս Կաղանկատուացին, խուսափում են ունէ յիշատակութիւն անել Շի(ա)րվանի իշխանութեան մասին, որն այնչափ կարեւոր դեր է խաղացել այդ երկրի պատմութեան մէջ:

Միակ բացառութիւնը կազմում է Անանիա Շիրակացին, որ Գաղտանի գլխաւոր ժողովուրդների անունները թուելուց յետոյ շարունակում է.

«Կովկասը (լեռնաշղթան) բաժանուած է երկու թեւի. մէկը ձգուած է ուղիղ մեր կողմը, ուր է Շիրվանը եւ Խարվան ժողովուրդը, մինչեւ Խորս լեռնաժայռը»:

Այդ Խորսը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ Շարվանի իշխանի լեռնային անառիկ ամրոցը՝ Կասպից լճի եզերքին, որով եւ նա, այդ իշխանը, թէ՛ Շարվանահ եւ թէ՛ «Խուրսի իշխան» է կոչուած:

Այսպիսով, այժմեան Շիրվանը (Շամախի) միջին դարում թէ՛ պետական-տնտեսական եւ թէ՛ ռազմական տեսակէտից Աղուանի աւանանշանաւոր նահանգն է եղած:

Այդտեղ, Գաղտանի հարաւ-արեւելեան փէշերում էր գտնուած վերջին Սասանեանների պաշտպանողական երրորդ դիժը՝ կովկասեան հոյակապ ամրութեանց սիստեմի շարքում: Բազուի նաւթը եւ այդ պետական գանձի կարեւորագոյն աղբիւրներն էին:

Մոռնալ պէտք չէ այն եւս, որ այդ երկիրը եւ մանաւանդ Բաղուն — (հայերէն՝ Բագա-